Հոդվածների կանչ
Ազգային ինքնությունը ճգնաժամի ժամանակ
Հունիս 29-30, 2025 թ.
Հայաստանի ամերիկյան համալսարան

Հորիզոն Եվրոպայի ԷԹԻԿԱ ծրագիրը (Հանրային հարցերի բարոյագիտության կենտրոն), որն իրականացվում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հասարակական գիտությունների հաստատության կողմից և ԵՏՀ ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մարիա Բաղրամեանի ղեկավարությամբ, իր միջազգային գործունեությունը կսկսի «Ազգային ինքնությունը ճգնաժամի ժամանակ» խորագրով միջառարկայական խոշոր գիտաժողովով: Գիտաժողովը կազմակերպել է Հանրային հարցերի բարոյագիտական կենտրոնը՝ Նյու Յորքի համալսարանի առաջադեմ ուսումնասիրությունների գլոբալ ինստիտուտի, Հայ մշակութային և գիտական ընկերակցության և ՀԱՀ-ի Թրփանճեան հասարակական գիտությունների հաստատության աջակցությամբ: Գիտաժողովը տեղի կունենա 2025 թ. հունիսի 29-ին և 30-ին ՀԱՀ-ում:

Գիտաժողովի նպատակն է հետազոտել բազմաթիվ հին և նոր մարտահրավերների ու անորոշությունների բախվող աշխարհում ազգային ինքնության դերի, նշանակության և բնույթի վերաբերյալ հիմնարար հարցեր: Հրավիրված բանախոսներն են.

Լևոն Աբրահամյան (Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան)
Անթոնի Ապիահ (Նյու Յորքի համալսարան, ԱՄՆ)
Ջինա Գուստավսոն (Ուփսալայի համալսարան, Շվեդիա)
Դեյվիդ Միլեր (Օքսֆորդի համալսարան, ՄԹ)
Աղասի Թադևոսյան (Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան)
Անն-Մարի Թիեսս (Գիտական հետազոտությունների ազգային կենտրոն, Ֆրանսիա)

30-40 որպե տևողությամբ գիտական զեկույցների 500 բառանոց հայերեն կամ անգլերեն ամփոփագրերը պետք է ուղարկել etica@aua.am հասցեին: Զեկույցները կարող են վերաբերել գիտաժողովի ընդհանուր թեմայի հետ առնչվող ցանկացած հարցի, այդ թվում.

- Ազգային ինքնության նարատիվներ. կոնստրու՞կտ, թե՞ մշակութային անսասան ժառանգություն
- Ազգային ինքնության տարբերակիչ հատկանիշներ. լեզու, ընդհանուր պատմություն, կրոն, արվեստ, ճարտարապետություն, մշակութային այլ խորհրանիշներ
- Ազգային ինքնության քաղաքականություն. քաղաքական համատեքստում ազգային ինքնության կիրառություն և չարաշահում
- Ազգային ինքնության էթիկա. իրավունքներ, պատասխանատվություն և բարոյական պարտականություններ
- Ազգային ինքնություններն աշխարհի տարբեր կողմերում

- Ինքնություններն ազգային սահմաններից դուրս և միգրացիայի ազդեցությունն ինքնության վրա
- Բազմամշակութայնություն և ազգային ինքնություն
- Ընդհանուր և մրցակցող ազգային ինքնություններ

Ընդունվում են նաև հրավիրված բանախոսների աշխատությունների վերաբերյալ զեկույցների ամփոփագրեր:

Ամփոփագրերը պետք է ուղարկել մինչև 2025 թ. փետրվարի 15-ը:
Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք նամակ ուղարկել etica@aua.am էլ. փոստին: